


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍՎԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
ՄԻԾԱԶԱՍԱԿՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԳԻՐ

ՄԵՇՍԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՆԴՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Լ Ա Խ Ս Պ Ա Ր Բ Հ Ր Ա Տ

Ծ Ր Ա. Գ Ի Բ

ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ (200 ԺՈՄ)

Ընթերցանություն.— Հասվող այլբրենի գործածությունը, կարողանալ բառեր կազմել և կարդալ առանց առող բաց թողնելու։ Կարողանալ բարձրաձայն, կանոնավոր կերպով կարդալ պարզ պատմվածքներ ու հոդվածներ, կանգ առնելով վերջակետից հետո։

Կանոնավոր կարդալ թե՛ դասագրքում—այլբրենացանում յեղած ձեռագիր հոդվածները և թե՛ ուսուցչի կողմից գրատախտակի վրա դրած տեքստը։

Կարողանալ պատասխանել կարդացածի շուրջն ուսուցչի կողմից արված պարզ հարցերին։

Կարողանալ կարդալ տեղական լրագրերում յեղած մատչելի հոդվածները, հասկանալ և հաղորդել նրանց համառոտ բովանդակությունը։

Ապահնանաբար վարժեցնել կանոնավոր, արտահայտիչ և բարձրաձայն կարդալուն, իսկ ընթերցարանի բաժնում սկսել նաև ինքնուրույն կերպով լուս, գիտակցական կարդալու փորձեր կատարել։

Կարողանալ անհասկանալի բառերն առանձնացնել։ Կարդալու ժամանակ հասկանալ ընդհանուր գործածական տերմինները։

Գրավոր աշխատանիք.— Պահպանելով տառերի և բառերի սովորական հեռավորությունները, կարողանալ գրել մաքուր և պարզ։

Ինքնուրույն կերպով կարողանալ գրել համառոտ

նախադասություններ՝ առանց տառեր բաց թողնելու և առանց ավելորդ տառեր գրելու բառերի մեջ. պահպանել նախադասության վերջում վերջակետի գործածությունը:

Գրավոր աշխատանքի ժամանակ կարողանալ պահպանել տարբական ուղղագրական կանոնները՝ մեծատառի գործածությունը նախադասության և հատուկ անունների սկզբում, ոժանդակ բայց առանձին գրվելը. գրության և արտասանության տարբերությունը:

Կարողանալ անսխալ կերպով գրել քաղաքական և արտադրական այն տերմինները և բառերը, վորոնք սովորաբար առորյա կյանքում գործածական են (Հեղափոխություն, կոլեկտիվ, կոլտնտեսություն, տեխնիմում, կոմբայն):

Գրել և կարողանալ կարգալ ամենազործածական կրծատ բառերը՝ ԽՍՀՄ, ՀԽՍՀ, Ժողկոմիորչ, Դորձկոմ, Գյուղինուրհուրդ, ՄՏԿ:

Կարողանալ գրի առնել իր մտքերը, գրել հասցե, լրացնել հարցաթերթիկ, պարզ ու մատչելի հարցերին տալ գրավոր պատասխաններ, տարեվերջում՝ նամակ:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

(Մշակման հաջորդականությունը)

Ծրագիրը կազմված է յերկու հիմնական բաժնեց՝
1) ընթերցանություն և 2) գրավոր աշխատանք:

Ինքնին հասկանալի յէ, վոր ծրագրի հիշված բաժինների նյութերը մշակվելու յեն վոչ թե առանձին-առանձին, այլ սերտ կերպով կապակցված են լինելու միմյանց հետ: Խոսքի զարդացման, ինչպես նաև գրքով ու լրադրով տարրող աշխատանքները պետք են շաղկապված լինեն ընթերցանության և գրավոր աշխատանքների հետ:

Ընթերցանություն. — Վորպեսզի կարողանան ձեռք բերել գրելու և կարգալու սկզբնական ունակություն, սովորողներն ամենից առաջ պետք են հասկանան, վոր

բառը կազմված է վանկերից, իսկ վանկը՝ հնչյուններից: Նրանք պետք են իմանան, վոր խոսքը բաժանված է բառերի, բառերը՝ վանկերի, վանկերը՝ հնչյունների և, վոր յուրաքանչյուր հնչյուն ունի համապատասխան տառ:

Սովորողները կարդալու ժամանակ պետք է կարողանան բառերը բաժանել վանկերի և վանկերը հընչյունների, տառերի: Հատկող այբբենով կազմել բառեր, կանոնավոր գրի առնել կազմված բառերը և կարդալ:

Այբբենարանով կարդալու ժամանակ, բառերի ընտրության տեսակետից, պետք է պահպանել աստիճանականություն. ա) միավանկ և յերկանկ բառեր կարդալը (վար, ցանք, նավ, ցորեն, գարի, արոր և այլն) և այնպիսի պարզ նախադասություններ, վորոնք կազմված լինեն նման բառերից. բ) յերեք վանկանի բառեր կարդալը (մեքենա, շարքացան և այլն) և կարդալ այնպիսի նախադասություններ, վորոնք կազմված են թե՛ այս թե՛ նախորդ տիպի բառերից. գ) մեկ փակ վանկ ունեցող բառեր և համապատասխան նախադասություններ կարդալը. դ) կարդալ այնպիսի բառեր, վորոնք ունեն յերկու բաղաձայն:

Սկզբնական շրջանում պետք է անցնել այնպիսի բառեր, վորոնք գրվում են այնպես, ինչպես արտասանվում են, խույս տալով այնպիսի բառերից, վորոնց ուղղագրությունը տարբեր և արտասանությունից, որինակ՝ մարդ, վարդ և այլն:

Սովորողները, աստիճանաբար ձեռք բերելով կարդալու ունակություն, սկսում են կարդալ համառոտ պատմություններ, հողվածներ, լոգոնդներ, պլակատներ, հայտարարություններ, պահպանելով կետագրական նշաններից վերջակետը և պատասխանելով կարդացած նյութի շուրջը տրված հարցերին:

Ուսումնական տարվա առաջին կիսամյակում սովորողները պետք է ձեռք բերեն պարզ պարբերություններն ամբողջ բառերով, իսկ բարդ, յերկար բառերը՝ վանկ-վանկ կարդալու ունակություն:

Նախադասության մեջ դանել այն բառերը, վա-
րոնք փոխարինում են գոյականին, անձնական դերա-
նուններ՝ յես, դու, նա, մենք, դուք, նրանք:

Բայ. — Ստորոգյալն իրեւ գործողություն և դրու-
թյուն ցույց տվող բառ: Գաղափար բայի մասին: Բա-
յի խոնարհումը՝ բայի ներկա, անցյալ և ապանի
ժամանակներ: Բայի խոնարհման ժխտական ձեր:
Բայի անորոշ ձեր: Բայի հրամայական ձեր. մի՛ ար-
դելականի ուղղագրությունը:

Բարդ բառեր. — Պարզագույն բառերի ոգնությամբ
հասկանալ բարդ և պարզ բառերը: Յե և վո կապակ-
ցությունների ուղղագրությունը:

Ածանցավոր բառեր. — Շատ գործածական նախա-
ծանցների և վերջածանցների ուղղագրությունը:

Գրավոր աշխատանքների ժամանակ ուղղագրա-
կան բառացուցակից ոգտվելու վարժություն: Պահել
ուղղագրական բառատետր, նշանակելով այնտեղ այն
բառերը, վորոնց գրելը դժվար է:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

(Մշակման հաջորդականությունը)

Ծրագրային նյութը յերեք բաժիններով դասավո-
րելն ամենենին չի նշանակում, թե պետք ե առանձին
պարագել կարդալով, առանձին՝ բանավոր և գրավոր
խոսքի ունակությունների զարգացումով և առանձին՝
ուղղագրությամբ ու քերականությամբ: Ծրագրի ըո-
լոր բաժինների մեջ պարապմունքների ընթացքում
պետք ե պահպանվի ամենասերտ կազ.

Կարդալու և գրելու տեխնիկայի, ուղղագրու-
թյան ու քերականության միջև ծրագրով հատկաց-
ված 145 ժամը պետք ե բաշխել համարյա հավասար:
Խոսքի զարգացման հիմնական աշխատանքը հարում է
կամ կարդալուն, կամ գրելու և քերականական վար-
ժություններին:

Հայոց լեզվի դասերին չեշտը պիտի դնել կարդա-
լու և գրելու վարժությունների վրա: Անհրաժեշտ է

կարդացած հաղվածի բովանդակությունը կապակցված
կերպով պատմել:

Դասատուն հետեւում ե սովորողների խոսելու
ձեին և ուղղում ե նրանց սխալները:

Գրավոր աշխատանիք. — Զեռագրի ուսուցման ժա-
մանակ սովորողներին պետք ե վարժեցնել կանոնավոր
նստել, զրիչն ու մատիտը կանոնավոր բռնել, կարո-
ղանալ վարվել աետրի ու թանաքի հետ: Սովորողները
պետք ե կարողանան կանոնավոր կերպով ձեւակերպել
վոքրատառերն ու մեծատառերը: Տառեր գրելու հետ
միասին սովորողները վարժվում են գրել ամբողջ բա-
ռեր և նախադասություններ, ձեռք են բերում հասկա-
ցողություն անունների ու ազգանունների, ինչպես
նաև նախադասության սկզբում մեծատառերի գործա-
ծության մասին:

Ուսումնական տարվա առաջին կիսամյակի վեր-
ջում սովորողները պետք ե կարողանան պարզ և կա-
նոնավոր ձեւակերպված տառերով գրքից արտադրել
տպագիր և ձեռագիր տեքստերը և լուղությամբ (նա-
խորոք վերլուծելուց հետո) գրի առնել կարճ նախա-
դասություններ՝ բազկացած այնպիսի բառերից, վո-
րոնք գրվում են այնպես, ինչպես արտասանվում են:
Սովորողներն արտադրություն կատարելու ժամանակ
պետք ե կարողանան պահպանել կետագրության և
մեծատառերի կանոնները:

Ուսումնական տարվա յերկրորդ կիսամյակի ըն-
թացքում սովորողները պետք ե ավելի ամբողջնեն ամ-
բողջ անցած նյութը, ձեռք բերեն ուղղագրական գի-
տելիքներ և ունակություններ:

Ուղղագրական գիտելիքները և ունակություններն
անցնում են հետեւյալ կարգով:

Հասկացողություն ձայնավոր և բաղաձայն տա-
ռերի մասին: Բառերի բաժանումը վանկերի: Տողա-
դարձ:

Վերնագիրը, պարբերությունը և հատուկ անուն-
ները մեծատառով սկսելը, վերջակետի գործածու-
թյունը:

Պարապմռւնքների ամբողջ ընթացքում սովորող-ները վարժվում են, առանց տառեր բաց թողնելու, ամենագործածական քաղաքական և արտադրական տեղմինները, համառոտած բառերն անսխալ գրել:

Այս և նման ձեռվ սովորողները հասնում են ինք-նուրույն գրավոր աշխատանք կատարելուն; Սովորող-ների գրավոր ունակությունները պարզելու և այն խորացնելու նպատակով՝ դասատուն հաճախ գրա-տախտակի վրա անհատ սովորողներին գրավոր վար-ժություններ ե տալիս, տալով միաժամանակ տնային աշխատանք:

ԹՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ (130 ԺԱՄ)

Ծրագրի ծավալը.— Վեցանիշ ամբողջ թվերի կար-դալն ու գրելը. կլոր միլիոնների կարգալն ու գրելը, կլոր թվերի զումարումն ու հանումը, կլոր թվերի՝ 10, 100, 1000 բազմապատկումն ու բաժանումը՝ միա-նիշ թվերի վրա. յերկարության, ծանրության և ծա-վալի մետրական չափեր. ժամանակի չափեր. գաղա-փար մասի և տոկոսի մասին:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

(Մշակման հաջորդականությունը)

1. Առաջին տասնյակի թվերի հաշվումը: 10 թի-վը: Զերոյի նշանակությունը՝ թվերը թվանշաններով գրելիս: Կլոր տասնյակներ: Գումարման, հանման և հավասարման նշաններ: 20-ից բարձր յերկանիշ թվե-րի հաշվումը: Թվանշանների տեղերի նշանակությու-նը թվերի մեջ: Թվերի հաշվումը 11-ից մինչև 19-ը:

2. Թվերի բանավոր գումարումը հարյուրի սահ-մանում և ապա նմանների գրավոր լուծումը մի տողի վրա (վոչ իրար տակ): Գումարման աղյուսակը:

3. Թվերի բանավոր հանումը հարյուրի սահմա-նում և նմանների գրավոր լուծումը մի տողի վրա (վոչ իրար տակ): Հանման աղյուսակը: Գումարման և հանման ստուգումը:

4. Հարյուրի սահմանում բանավոր գումարման և հանման պարզեցրած ձևերը:

5. Յեռանիշ և քառանիշ թվերի հաշվումը: Թվերի կարգերը:

6. Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր գումարումը: Գումարելիներ: Գումար: Զերոն գումարելիների մեջ: Բարդ անվանական թվերի գումարումը (ոռորդի և կոպեկ, որեր և ժամեր և այլն):

7. Յեռանիշ և քառանիշ թվերի գրավոր հանումը: Նվազելի: Հանելի: Մնացորդ կամ տարբերություն: Զերոն նվազելիի մեջ: Գումարման և հանման ստուգումը: Բարդ անվանական թվերի հանումը (ոռորդի և կոպեկ, որեր և ժամեր և այլն):

8. Հոռմեյական թվանշաններ: Հոռմեյական թվանշաններով գրելը 12-ի սահմանում և նրանց կարդալու:

9. Հնդանիշ և վեցանիշ թվերի հաշվումը: Միավորների և հազարավորների գասերի կարգերը: Հընդանիշ, վեցանիշ թվերի գումարումն ու հանումը;

10. Գաղափար բազմապատկման մասին: Բազմապատկելի: Բազմապատկման մասին: Արտադրյալ: Միանիշ թվերի բազմապատկման աղյուսակը:

Յերկանիշ թվի բանավոր բազմապատկումը միանիշ թվով: Զերոյով վերջացող թվերի բանավոր և գրավոր բազմապատկումը միանիշ թվով: Զերոները բազմապատկելիի մեջ:

11. Գաղափար բաժանման մասին: Բաժանելի: Բաժանաբար: Քանորդ: Բաժանման աղյուսակը 100-ի սահմանում: Բազմապատկման և բաժանման ստուգումը: Յերկանիշ և յեռանիշ թվերի բանավոր բաժանումը միանիշ թվի վրա, յերբ բաժանելիի յուրաքանչյուր կարգն առանց մնացորդի բաժանվում և բաժանաբարի վրա: Բանավոր բաժանումն մնացորդով: Յերկանիշ թվի բանավոր բաժանումը միանիշ թվի վրա, յերբ սահացվում է յերկանիշ քանորդ: Բազմանիշ թվի բաժանումը միանիշ թվի վրա (կիսազրավոր յեղանակով): Զերոները բաժանելիի մեջ և քանորդի վերջում:

12. Ամբողջ թվերի հաշվումը, մինչև միլիոն:

Գաղափար միլիոնի մասին: Կլոր միլիոնների հաշվումը: Կլոր միլիոնների բանավոր գումարումն ու հանումը և նրանց գրավոր լուծումը մի տողի վրա: Զերոները նվազելիի մեջ:

13. Ամբողջ թվի բազմապատկումն ու բաժանումը 10-ի, 100-ի և 1000-ի վրա:

14. Յերկարության, ծանրության և ծավալի մետրական չափեր: Խոչոր չափերի վերածումն ավելի մանրերի և ընդհանարակը: Բարդ անվանական թվերի գումարումն ու հանումը: Ժամանակի չափեր (դար, ամիս, որ, ժամ, րոպե և վայրկյան): Ժամանակի խոչոր չափերի փոխարինումն ավելի մանր չափերով:

15. Գաղափար մասի վերաբերյալ: Մասեր կազմելը, կարդալը և գրելը — $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, $\frac{1}{100}$, $\frac{1}{1000}$

Գաղափար տոկոսի մասին: Տոկոսի արտահայտելը կոտորակով (50 տոկ., 25 տոկ., 10 տոկ.):

16. Անցածի կրկնությունը և հաշվառում:

Ծանօթություն. — ա. Յուրաքանչյուրը բաժինն անցնելիս պետք է խնդիրներ լուծել: Ամբողջ գասընթացի ընթացքում հարկավոր և հատկապես ուշագրություն գարձնել ուսուցչի զեկուվարությամբ սովորողների կողմից խնդիրներ կազմելու վրա:


բ. Վորպես ոժանդակ պարագաներ, զպրոցում պետք է լինեն համբիչներ, չափերի նմուշներ, բազմապատկման, բաժանման, մետրական չափերի պատի աղյուսակներ, մասերը և տոկոսները պատկերող աղյուսակներ:

ԺԱՄԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍ ԹԵՄԱՆԵՐԻ

1) Հարյուրի սահմանում ամբողջ թվերի կարդալը, գումարելը և հանումը (30 ժամ):

2) Յեռանիշ և քառանիշ, ինչպես և հնդանիշ ու վեցանիշ թվերի հաշվումը, գումարումը և հանումը: Հոռմեյական թվանշաններ (26 ժամ):

- 3) Բազմապատկում միանիչ թվով (18 ժամ) :
- 4) Բաժանում միանիչ թվի վրա (22 ժամ) :
- 5) Կլոր միլիոնների կարգալը, գումարումը և
հանումը: Բազմապատկում և բաժանում 10-ի 100-ի և
1000-ի վրա: Մետրական չափեր: Գաղափար մասի և
տոկոսի մասին (34 ժամ) :



ՀՀ Ազգային գրադարան



NL0933151

28 АВГ 1938

428

ԳԻՒԾ 25 ԿՈԹ.

11

28155

ПРОГРАММА

для школ по ликвидации неграмотности взрослых

Преспериодиздат, Ереван 1938 г.